

խրատներին, նա շուտով կդառնայ ամենահեղինակաւոր անձնաւորութիւնը ժողովրդի մէջ: Բայց դժբաղդարար կան բազմաթիւ ուսուցիչներ, որոնք առանց խորհելու այդ ամենի մասին, բարոյսին անճատուած են մնում ժողովրդից, չեն ըմբռնում իրանց պաշտօնի վեհ նշանակութիւնը և հենց առաջին բարեդրասեհ գէպքում պատրաստ են թողնել ուսուցչութիւնը և նոր ասպարէզ մտնել: Այս վերջին երևոյթը առաջ է գալիս ջանադիրական միտումներէց...: Սակայն պէտք է խոստովանել և այն որ դրամից աւելի զօրեղ է լինում՝ յիշեալ չարքիքի բուն պատճառը, այսինքն ուսուցչի սնտեսական պահանջները, նրա նիւթական անապահովութիւնը...: Այդ պատճառը ի հարկէ յարգելի է, եթէ միայն շարժառիթը ինքը ուսուցիչը չէ: Երբեմն պատահում է, որ թէ դպրոցի և թէ իրան անապահովութեան բուն պատճառը ինքը ուսուցիչն է լինում...: Օրինակ եթէ ուսուցիչը անարժան է իւր պաշտօնին, եթէ դպրոցը սպասած օգուտները չի տալիս, շատ հասկանալի է, որ ժողովուրդն էլ անտարբեր կմնայ դէպի դպրոցը և բոլորովին չի էլ մըտածէ ուսուցչի անապահովութեան մասին: Իսկ եթէ ժողովուրդը սիրէ դպրոցը և ուսումը, այն ժամանակ գրեթէ անկարելի է, որ ուսուցչին անապահով վիճակի մէջ թողնին: Ուրեմն եթէ ուսուցիչը կամենում է բարւոքել իւր վիճակը, պէտք է ջանասիրութեամբ և ազնուութեամբ կատարէ իւր ստանձնած պաշտօնը: Իւրաքանչիւր ուսուցիչ պէտք է ըմբռնէ այդ իրողութիւնը և առանց դէս ու գէն ընկնելու իւր ոյժերը ի մի հաւաքելով ազնուաբար աշխատի մշակէ այդ բարգաւանդ դաշարը որը կարող է ըստ արժանւոյն վարձատրել գործադրած աշխատութեան փոխարէն: Այս չափազանց ծանր և դժուար է ուսուցչական պաշտօնը...: Բայց միևնոյն ժամանակ և չափազանց գրաւիչ ու մխիթարական է: Հարկաւոր է միայն ընդունակութիւն ունենալ, այդ ընդհանրութեան օգտին նուիրած վեհ գործի գրաւութեան և մխիթար

ութեան անսպառ աղբիւրը գտնելու համար:

ԵՂԱՇԷ ԹՈՓՉԵԱՆ



**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

Ի ՄՈՎԱԼԵՍԷ ԲԵՐԹՈՂԱՇՕՐԵ ՊԱՏՄՈՒԹԵ.  
 ՆԷ ՎԱՍՆ ԿՈՍՏԱՆԳՒԼԱՆՈՍԻ ՄԵՆՕՒ  
 ԹԱԳԱՒՈՐԷՆ.



այն ժամ եկն Տրդատ ի Հայս և առ զԹարութիւնն իւր և հաստատեցաւ տէրութիւնն: Առքէ զՍմբատ ասպետ անկ զկոյսն Աշխէն՝ զգուտար Աշխադարայ, ետ ի կնութիւն— և ոչինչ նուազ էր կոյսն արքային հասակի— և հրամայեաց զրել զնա Արշակունի և զգեցուցանել ծիրանիս, և թագ կապեալ, զի հարսնացի արքայի, Յորոց եղև որդի Խոսրով՝ ոչ նման ծնողացն:

Ընդ այն աւուրս փեսայացուցանէ ( ) զՍոսանգիանոս ի դուստր իւր Մաքսիմիանա, ի նիկովիզայ—զորդի Սոսա և Հեղինէի: Այս Սոսանգիանոս բարեկամացեալ ի հարսնինս ընդ Տրդատայ մեր թագաւորին: Յետ ամաց մեռաւ Սոսաս արքայ նոսրմայ, փոխանակ նորա առքէ զորդին և զիւր որդիացեան՝ զՍոսանգիանոս: Եւ Սոսանգիանոս՝ մինչդեռ Անար էր, մարտեալ ի մարտ պատերազմի և տրտմութեամբ ննջեալ, երևեցաւ նմա խաչ աստեղեա յերկնից՝ պարունակեալ զբով և ասէ. Այսու յաղթեա՛ զոր արարեալ զձև խաչին և յառաջ բերեալ պատերազմացն՝ յաղթեաց, Բայց յետոյ հրապուրեալ ի կնոջէն իւրմէ Մաքսիմիայ՝ ի դստերէն Գիոկղետիանոսի, յարոյց հալածանս եկեղեցոյ և զբազումս արար վկայս, որք վկայեցան ի կոչումն վկայութեան: Եւ ինքն Սոսանգիանոս պատուհասեալ ի Տեսունէ յեղափանդական բորոտութեամբն՝ բոլոր մարմինն ընկալաւ զապականութիւն, վասն համարձակութեան նորա ի վերայ քրիստոնէից, զոր ոչ կարացին արիողեան կախարդքն բժշկել և մարինեան բժիշկքն: Անդաքս որոյ առաքեաց առ Տրդատ առաքել նմա զիւլթս և կախարգս ի Պարսից և ի Հնդկաց, սակայն ոչ հասին նմա յօգուտս: Զոր

( ) Արդեօք Գիոկղետիանոս անունը գրչի անզգուշութիւնիցն է դուրս մնացել այստեղ, թէ այն պատճառով, որ այս կտորը Գիոկղետիանոսի մասին եղած մի պատմութեան անմիջական շարունակութիւնն էր կազմում:

և քուրմք հրամայեցին՝ ի դիաց խրատուէ, բազմութիւնք տղայոց զենուլ յաւազան և ջերմարեամբ լուանալ զինքն և ողջանալ որոյ լուեալ զլսելն մանկանցն հանդերձ մարցն կականմամբք՝ մարդասիրեաց զնոցայն լա համարեալ զկեանս քան զիւրն: Յաղագս որոյ զփոխարէնն ընդունի յԱստուծոյ՝ յանջրգական քարոզութեանցն, յառաքելական քարոզութեանէ, հանդերձ լուացմամբ կենսատու աւաղանին, ասնուլ հրաման սրբիլ ի բորտութեանէ և ի մեղաց՝ ի ձեռն Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին, որ ի նմանէ հալածեալ էր և թաքուցեալ ի Սերապտինոն լերինն: Յորմէ աշակերտեցաւ և մկրտեցաւ և սրբեցաւ և զպիղծ թագաւորսն բանալով և ջնջելով՝ որպէս ուսուցանէ Ագաղանկեղոս: Եւ յետ այնորիկ առաքեալ զմայր իւր յերուսաղեմ խնդրել զգատուական փայտ սուրբ խաչին՝ հանդերձ հինգ բեւեօքն, ի ձեռն Յուդայի, որ և հաւատաց և մկրտեցաւ ի ձեռն սբանչելեացն, որ և նա եպիսկոպոս ձեռնադրեցաւ Երուսաղեմի ի նոյն հայրապետէն Հռովմայ:

Ի բանալն Աստուծոյ զթագաւորսն ամենայն յերեսաց Աստանդիանոսի՝ Գրիգորեանոսի լցեալ քսան ամ սատակեցաւ ի Գաղմատիայ, Մաքսիմիանոս շար մահուամբ սպանաւ և որդի նորա Մաքսիմէս արար հալածումն քրիստովնէից և ինքն պղծութեամբ և դիւանուէր պաշտամամբ վարէր և կարծէր այնու յաղթել Աստանդիանոսի և գործեաց կամուրջ նաւօք ի Տիրեբրիս գետ և կամէր անցանել ինքն և զօրք յանկարծա՛ի շարժեցաւ և ընկրվեցաւ ինքն և զօրք իւր և մեռան ի ջուրն որպէս փարաւովն: Յայնժամ թագաւորն Աստանդիանոս հրամայեաց զյաղթութեան նշանն Քրիստոսի դրոշմել ի կապերտակի, որպէս թէ ունիցի յաջոյ ձեռին զխաչն, և մտեալ ի Հռովմն հրամայեաց յամենայն նշանաւոր տեղիս կանգնել զսուրբ խաչն յաղթութեան: Իսկ միւս Մաքսիմանիոս յարեւելս գաղտ ի տեղի միոջ բնակեալ էր բազում զօրօք և իսկոյն հասին նմա դատաստանք Աստուծոյ զի ամենայն մարմինք նորա աներևոյթ հրով այրէր՝ և խելապատ ուղեղին ուժգնապէս և երկոքին աչքն ի դուրս ոստեան և մինչդեռ ոգին առ իւրն էր խոստովան լինէր Տեառն մերոյ և խնդրէր մահ, և այնպէս մեռաւ: Իսկ զԼիկիանէս մեծարեաց Աստանդիանոս և ետ զքոյր իւր նմա ի կնութիւն՝ ոչ համամայր ծիրանեօք և սրակաւ զարգարեաց զնա և արքայ յարեւելս կացուցանէր: Բայց զոր աստուծային Բան առ Երրայեցիսն անհնարին համարեալ զարութեանն սովորութիւն՝ ինձու փոխեալ զխայտութիւնն և կամ հնդկի զսեւութիւնն և սոն ամպարչտի զբարս իւր նոյնպէս և աստ յանօրէն Լի-

կիանէան երևի՝ նախ ի հաւատուն ապա ի գործան: Յարոյց հալածանս եկեղեցոյ և նենգութիւն գաղտնի ընդ Աստանդիանոսի: Նա և սրապում շարիս եցոյց որ ընդ իւրով իշխանութեամբ՝ ցանկասէր և գարշելի ալեւոր ներկածոյ ունելով զհերսն, որ և զկին իւր ի մեծ նեղութիւն արկ յաղագս երանելոյն Քլաթիւսեա վասն որոյ սղան զուրբն Բարսեղիոս Ամասիա Պոնդաքոյ եպիսկոպոս: Եւ իրրե յայտնեցաւ դուռն և դիտացեալ եթէ լուս ոչ լինի Աստանդին 2) — մասնեաց Սատուած ի ձեռս նորս զԼիկիանէս, որ և ինայեալ՝ որպէս ի ձեռունի և ի քեռայր իւր, ետ ամենլ զնա երկաթի կապանօք ի մետաղս ի Քաղիոս զի աղօթեցէ առ Աստուած, որում մեղաւ թերեւ գտցէ ողորմութիւն ի նմանէ: Եւ ինքն հանդերձ որդովքն իւրովք հաստաւեր զթագաւորութիւնն ուղղութեամբ և ուղղափառ հաւատովք և ոչ պարտ վարկուցեալ ի Հռովմ դասնալ, այլ ի Բիւղանդիոն անցեալ, հաստատէր զարքունիսն՝ յանջրգական իմն տեսութեանց: Հրամայեաց գերապայծառ շինուածս սոնել և հինգպատիկ առաւել մեծացուցանէ Մեծն Աստանդիանոս՝ ամենապատիկ յօրինեալ զնա հրաչիւք: զի ոչ այլ մեծ ինչ կայր ձեռնարկութիւն և անուանեաց զնա նոր Հռովմ բայց աշխարհն յանուն նորա կոչէին զնա Աստանդիանու քաղաք:

Այս հատուածը արտագրուած է (ըստ կարեւորյն տառացի միայն կէտադրութիւնը ըստ իմ ըմբռնման) Փարիզի Ազգային Մատենադարանի համ. 44 ձեռագրից (էջ 455 շ), որ ամենաընտրանքից և ամենահանրից մէկն է այնտեղի հայկական ձեռագրիների ճոխ ժողովածուի մէջ. մի պատուական ձառքնտիր գրուած 11109 = 1194 թ-ին Գրիգոր Տղայի կաթողիկոսութեան ժամանակ: Տիրիկ բերդի մօտ նեղուկ գիւղում: Արդէն շատերը առանձին ուշադրութիւն են դարձրել այս ձեռագրի վերայ և մի քանի կարևոր հատուածներ նորանից տպուած են վաղուց եւրոպական հրատարակութիւնների մէջ. եթէ ներկայ հատուածը անուշադիր է մնացել, գորա պատճառն այն է անշուշտ, որ ամենքը ինչպէս օրինակ ձեռագրիների ցուցակը կաղմոջ Աբրայ Մարտէն: Խորհնացու վաւերականութեան մասին չկատարեւելով նորան մի քմահաճ բաղադրութիւն են համարել, Խորհնացու պատմութեան Բ. գրքի 24, 21 և 2Ը գլուխներից ուշ ժամանակն-

2) Այստեղ գրիչը ակնբեր և մի քանի խօսք բայց է թողել, Աստանդին անուան կրկնութիւնից խաբուելով:

բում մի որևէ կրօնաւորի ձեռքով իրար կցկցուած։ Սակայն նոյն իսկ այն հանգամաքը՝ որ այս հաստուածը աւելի հին է քան ինչքան դիտեմք Խորենացու պատմութեան մէջ յայտնի ըլլոր ձեռագիրները՝ բաւական է նորա արժէքը ակնյայտնի կացուցանելու եթէ մինչև իսկ Խորենացու վաւերականութեան հարցը մէկ կողմ թողնելնք։ Էին ասելով մենք դուցէ այստեղ ժԲ գարից շատ աւելի միւս կողմ պէտք է երթա՞ք։ քանի որ ճառընտիր օրինակները անշուշտ ամեն անգամ չէին որոնում իւրաքանչիւր հաստուած բնագրից չէին արտագրում այլ վերցնում էին այն ինչ որ իրենց առաջը կար ինչ որ գարեբէ ի վեր ժողովածուի մէջ էր մտել։ Իսկ եթէ աւելի ուշ ժամանակներում գրուած ճառքնորենքի մէջ այս հաստուածը այլ ևս չենք գրուում այդ նորա համար է դուցէ որ շուտով նկատեցին նորա անհամաձայնութիւնը Խորենացու հետ և վերջինիս հեղինակութիւնը յարգելով՝ փոխարինեցին նորան ուրիշ աղբիւրներից առած Կոստանդիանոսի պատմութիւններով որևէ միջին գարի ճառակին աւելի համապատասխան էին։ Եսմենայն դէպքս այս հաստուածը առանձին կարեւորութիւն է ստանում մեր օրերում նոյն իսկ Խորենացու հետ ունեցած անհամաձայնութիւնների պատճառով մինչ պատմական քննադատութիւնը մեր պատմահօր նշանաւոր գործի վաւերականութեան դէմ այնպիսի զօրեղ կռիւ է վարում և այդ քննադատութեան գլխաւոր ներկայացուցիչ Պրոֆ. Կարրիէր իւր առարկութիւնների մի որոշ մասը այս իսկ հաստուածին համապատասխան գլուխների վերայ է հիմնել։ Այսօր իրերի վիճակն այնպէս է որ Խորենացու մասին ասած ամեն մի խօսք կորած պէտք է համարել։ Եթէ նա չէ հիմնուած այս քննադատութեան հիմունքների հետ մօտիկ ծանօթութեան և առհասարակ խնդրի մանրամասն ուսումնասիրութեան վերայ։ և ես պարտաւոր էի զգում ինձ նախ քան ներկայ հաստուածը հրատարակելը այդ ուսումնասիրութիւնը յանձն առնել։ Բայց որովհետև իմ մասնաւոր պարագմունքները արգելք եղան և դուցէ դեռ երկար ժամանակ արգելք կլինին այդ աննույն իրաւունք չեմ համարում ինձ այլ ևս ծածկել փոքրիկ գիւտը բանասերների հետաքրքրութիւնից և կանոնաւոր հետազոտութիւնը աւելի ձեռնհաս անձանց թողնելով կբաւականանամ իմ կողմից միայն մի քանի նկատողութիւններով։

Առաջին էական հարցն այն է ի հարկ է թէ այս հաստուածը Խորենացու պատմութեան հետ համեմատելով ինչ եզրակացութեան ենք գալիս։ Թեթև աչքով նայած հարցը ինչպէս վերև նկատուեցաւ շատ պարզ է։ Ըստ երևութիւն՝ Կոստանդիանոս կայ-

սեր պատմութիւնը տալու նպատակով մէկը վերցրել քաղել է մեզ ծանօթ Խորենացուց նորան վերաբերեալ կտորները և մի քանի կամայական փոփոխութիւններով ինչպէս այդ սովորաբար լինում է այսպիսի ձեռնարկութիւնների հետ։ Ճառընտիր մէջ է մտցրել։ Սակայն եթէ աւելի մօտիկից նայենք կտեսնենք որ այս պարզ ենթադրութեան դէմ հակասող շատ կէտեր կան։ Կախ արտաքին ոճի կողմից։ Մի հանգամանք որ մինչև այժմ թէ հայ և թէ օտար դիտուներին արգելք է լինում Խորենացու պատմութեան մէջ ներմուծումներ ընդունելու այդ նորա ոճի միատեսակութիւնն է ամենքի ստացած այն սպաւորութիւնը թէ այս ամբողջ գրուածքը մի կաղապարից է եղել։ Արդ՝ ներկայ հաստուածը մի ուրիշ ոճ ունի նոյնպէս սկզբից մինչև վերջ միատեսակ իրեն առանձնայատուկ ոճ։ Եթէ աւելիք գրողը այստեղ աշխատել է Խորենացու ոչորուն գործուածները պարզելու աւելի հասկանալի դարձնել՝ դուցէ մի քանի նախադասութեան համար այդ իրաւացի կլինէր բայց ոչ ամենքի համար ուր երբեմն թուում է թէ Խորենացին է ընդհակառակն որ հաստուածի կտրուկ ու մտք մասցուածքը կողմնակի խօսքերով պարզել զարգարել է։ Հաստուածի ոճը անմշակ է։ գրութեան թէ ներքին և թէ արտաքին կապը կցկտուր։ Բայց և հէնց այդ պատճառաւ նա՝ մեկնութեան ընդհանուր կանոնների համաձայն իրբև աւելի սկզբնական գործ պէտք է նկատուի։ Իւր տեսակէտից առած այդ ոճն ևս իւր կանոնաւորութիւնն ունի և եթէ մենք Խորենացու հետ ամենևին ծանօթ չլինէինք ոչինչ կանխակալ կարծիք չունենայինք սկզբից մինչև վերջ նա մեզ բոլորովին անկախ ու միապաղաղ պէտք է երևար։ Այդ սպաւորութիւնը աւելի զօրեղ է։ Եթէ մենք ներքին բովանդակութեան կողմից նայելու լինինք։

Առանց Խորենացու ծանօթութեան մենք ամենևին կասկածել չէինք կարող թէ Կոստանդիանոսի այս պատմութիւնը ընդհատուած է եղել ուրիշ միջանկեալ դէպքերով։ Աւելի հետաքրքրականն այն է որ մինչդեռ այս ընդհատումից յետոյ 21-ը գլխի վերջում 5) Խորենացու Կոստանդիանոսի մասին պատմածը խիստ բռնի կերպով է կապած նախընթացի հետ։ հաստուածի մէջ այդ կապը բոլորովին բնական է։ Հապուհի և Կոստանդիանոսի մէջ կայացրած հաշտութիւնը ոչինչ առընչութիւն չունի Հեղինէին նրուսաղէմ՝ ուղարկելու գործի հետ մինչդեռ այս գործը անմիջապէս Կոստանդիանոսի դարձից յետոյ պատմած՝ կատարելապէս իւր տեղն է։ այնպէս որ

5) Կժ ձեռքի տակ եղած օրինակը Աննատիկ 1827 թ-ի տպագրութիւնն է։ ուր տես եր. 352.

ինքն ըստ ինքեան աւելի խելքի մօտիկ է ընդունել, թէ յետոյ եկող մի մատենագիր հասուածի պատմութեան մէջ նոր գէպքեր մտցնելով, Աստանդիանսի անուան յիշատակութիւնից օգուտ քաղած լինի ընդհատածը կրկին շարունակել, քան մտածել ընդհակառակը՝ թէ հասուածի գրողը այս գէպքերը դուրս ձգելով պատահարար միայն երկու կտորները այնպէս գեղեցիկ կերպով իրար կցած լինի, և հարկէ սորա փոխանակ Խորենացու պատմութեան մէջ՝ օր. 29. գլխի սկզբում՝ կայր աւելի բնական է երևում քան հասուածի մէջ համապատասխան տեղում: սակայն հէնց այս տեղը՝ նոր հասուածի մէջ նորանոր իրողութիւններ են պատմուած, որոնք Խորենացու մօտ պակաս են՝ առեղծուածի ամենահետաքրքիր կէտն է: Եթէ մեր հասուածի ասորերութիւնը Խորենացուց միայն նորս մէջ լինէր, որ այստեղ մի քանի պակաս կտորներ կան՝ այն ժամանակ հետ էր ի հարկ է բացատրութիւն տալ միւս երկրորդական դժուարութիւնները անուշագիր թողնելով: բայց բանը նորանումն է, որ մենք աւելի կտորներ էլ ունինք, Սոցանից մէկը՝ 24. գլխի վերջը կցած փոքրիկ յիշատակութիւնը Յուդայի մկրտութեան մասին: ոչինչ կարևորութիւն չունի ամեն որ կարող էր այդ պատմութիւնը կարգացած լինել և այստեղ գէպքից օգուտ քաղելով այդ մի խօսքը իւր կողմից աւելացնել, բայց թէ ինչն էր գրուած մի եկեղեցական մատենագրի, որ բարոյակրթական նպատակով Աստանդիանոս սթագաւորի պատմութիւնը Խորենացուց արտագրում էր, փնտռել, մի ուրիշ տեղից Գիողեթիանոսի 2 Մաքսիմիանոսների, Մաքսիմոսի մասին պատմուած այս զուտ քաղաքական գէպքերը բերել այստեղ մտցնել—գոնէ ինձ համար դա բոլորովին անհասկանալի է:

Ասաններիցս գուցէ կերևայ, թէ ես արդէն ընդունել եմ Խորենացու պատմութեան անվաւերական լինելը և կամենում եմ մի հարուած էլ իմ կողմից աւել, իմ մտքից հեռու է այդ, Արդարեւ ես խնդրի վերայ այնպէս չեմ նայում, իբրև թէ Խորենացու վաւերականութիւնը մեզ համար մի սրբութիւն լինէր, նորան պաշտպանելը մի տեսակ ազգասիրական պարտք, այլ ընդհակառակը կարծում եմ, թէ մենք ի սրտէ շնորհակալ պիտի լինենք այն գիտնականներին, որոնք լըջօրէն և ուղիղ քննադատութեան տեսակետից այսպիսի հարց բարձրացնելով ճանապարհ են բանում մեր առ այժմ գրեթէ բոլորովին մութ պատմութեան վերայ մի լոյս սփռելու, սակայն պ. Վարրիէրի գրածները կարգաւորուց զատ՝ բարդ ունեցած լինելով անմիջական անձնական յարաբերութեան մէջ նորս հայեացքն:

րին ծանօթանալու—մինչև այժմ բերած փաստերը դեռ բաւական զօրեղ չեմ համարում (ինչպէս այսօր գրեթէ ամենքը Եւրոպայում համարում են) Խորենացու վաւերականութիւնը հերքելու, Առանձին առանձին վերցրած նոցանից ոչ մէկը դրականապէս չէ հերքում, բայց բոլորը մէկ տեղ, մասնաւոր «անգէս ամսօրեայ» վերջին ապրիլ հմր. ի մէջ բերածը՝ հետն առնելով մի շարք ուրիշ հանգամանքներ, որ մեր գրականութեան հետ իմ թերի ծանօթութիւնը առաջ է դնում, այդ վաւերականութիւնը ինձ համար միայն կասկածելի կարելի է ասել խիստ կասկածելի են դարձնում: Բայց ինչպէս վերև նկատեցի այսպիսի խնդիրների մէջ վճիռ տալու համար ինձ բոլորովին անպատրաստ գտնելով կամենում եմ միայն իրողութիւնները ներկայացնել, այնպէս՝ ինչպէս ինքս տեսնում եմ, Խորենացու անվաւերականութիւնը հաստատուեց յետոյ հարկաւոր կլինի նաև նորս ծագումը բացատրել, այս պատմութեան կազմող տարրերը որոշել, Ահա այդտեղ վերև յառաջ բերած հասուածը մեզ բոլորովին ուրիշ եզրակացութեան կտանէր՝ քան գէպի որը միտում է այժմ պ. Վարրիէր: Այն ժամանակ հարկ կլինէր ընդունել, որ Խորենացու պատմութեան հեղինակը իւր աչքի առաջ ունէր արդէն պատրաստի մի գործ և այն իւր նպատակին յարմարեցնելով, նորանոր յաւելուածներ աւելացնելով, թէ ըստ ներքնոյն և թէ ըստ արտաքնոյն բոլորովին նոր կերպարանք տալով առաջուայ հեղինակի, ուրեմն Մոփսէս Քերթոզահասօր, անուան տակ կրկին հրատարակ է հանել, և այսպէս նորը, աւելի բազմաբովանդակը և ժամանակակիցը հնի տեղն է բռնել, հնի հեղինակութիւնը վայելելով, Սակայն ո՞վ է այն ժամանակ այդ Քերթոզահասօրը, Այստեղ միայն հետաքրքրութեան համար կարող եմ նկատել, որ նոյն մեր հասուածը պարունակող Ճաւրնորի մէջ, էջ 486 գտնուում է «պատմութիւն փոխման Աստուածածնին և պատկերին ուր Հոգեաց լանքընէ, զոր ասացեալ է Մոփսէսի Խորենացոյ», Արդեօք Ճաւրնորը կազմողի համար այս Խորենացին և այն Քերթոզահասօրը նոյն անձն են եղել, Յայտնի է, որ Մոփսէս Քերթոզահասօր անունով մեր գրականութեան մէջ բացի Ե. դարի մեծանուն փիլիսոփայից յայտնի է նաև մի է. դարի հեղինակ՝ Մոփսէս Սիւնեցին 4): Բննադատական դպրոցի տեսակետից մեր յառաջ բերած հասուածը և ուրեմն Խորենացու սկզբնական պատմութիւնը նոյնքան և աւելի հեշտութեամբ այս Մոփսէսի գործ կարող է լինել, որքան և Փարպեցու յիշատակած

4) Տես Զարբանալեան Ա. տպ. եր. 362:



պատմութեան քառ մ'ալ չէ ըսած՝ 8) ոչինչ փաստ չէ հեղինակի վկայութեան դէմ: քանի որ այնչափ զօրեղ պատճառներ կան ենթադրելու: Թէ այժմ մեր ձեռքն եղած Ազաթանգեղոսը նոյնը չէ: Ինչ որ այդ հին ժամանակներում գործածածը:

Անկարող լինելով այս խնդրի վերայ հետուն գրնալ՝ ես միայն այն կ'ընչեմ. Թէ նոյն մեր հ. Կէ ձեռագրի մէջ (ինչպէս եթէ չեմ սխալուում նաև ուրիշ աղբիւրների մէջ) Ազաթանգեղոսից առած կտորները երեք կերպ են յիշած. մի քանիսը «ի վարդապետութենէ ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչին» միւսները «վկայարանութիւն ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչի» վերնագրի տակ. իսկ որ ամենից հիտաքրքրականն է՝ մի կտորի համար ասած է միայն (էջ. 453). «Յայլմէ պատմութենէ, վասն զի զթագն ընդունէր ի հրեշտակէն»: Ազաթանգեղոսի անուն ամենևին չկայ: Ինչո՞վ է բացատրուում այս: Ի՞նչ պատճառ ունէր ճառընտիր կազմողը Ազաթանգեղոսի անունը չտալու: Ինչպէս նա վարուել է իւր ուրիշ աղբիւրների նկատմամբ. կարելի՞ էր բացատրել այս վարմունքը: Եթէ Ազաթանգեղոսը նոյնը լինէր և նոյն հեղինակութիւնն ունենար նորա ժամանակի ինչ որ այսօր մեր մէջ, 2<sup>է</sup> կարող լինել ընդհակառակն՝ որ մեր հատուածի յիշած Ազաթանգեղոսը յունարէն կամ յունարէնից թարգմանած մի ժողովածու եղած լինի, որի մէջ թէ Սեղրեստրոսի վարքը կար թէ «պիղծ թագաւորների ջնջման» պատմութիւնը, թէ այժմեան Խորենացու և Ազաթանգեղոսի առաջ բերած ուրիշ նիւթեր: Լոկ ենթադրութիւններ միայն: Բայց գոնէ այսքանը կայ որ Ազաթանգեղոսի հարցը մեր պատմութեան մութ կէտերից մէկը լինելով նորա վերայ առ այժմ ոչինչ չէ կարելի հիմնել:

Գանք Պ. Կարրիէրի Խորենացու 2Գ. գլխի բովանդակութեան նկատմամբ բերած մի քանի առարկութիւններին: 1) Հեղինէի պոռնիկ լինելը մեր հատուածի մէջ չէ յիշած. ուրեմն կամ ճառընտիր կազմողն է բարեպաշտական զգացմունքից այդ յիշատակութիւնը բաց թողել կամ Խորենացու պատմութեան հեղինակն է նոյնը այդ ուրիշ աղբիւրներից առած մտքերը: 2) Մեր հատուածի մէջ չէ յիշած, թէ Կոստանդիանոս կեսար էր, երբ նա Մաքսիմիանային կնութեան առաւ. ուրեմն այս էլ պէտք է յետոյ մտած լինի: 3) Ոչ մեր հատուածի և ոչ

8) Տես Կարրիէր եր. 39. Պէտք է նկատել, որ մեր հատուածի մէջ յիշած տեղում որոշ չէ: Թէ արգեօք Ազաթանգեղոս «պիղծ թագաւորները ջնջելու» պատմութիւնն է միայն որել, թէ նաև վերև յիշածները պատմել:

Խորենացու մէջ ասած է: Թէ «երբ Կոստանդիանոս իւր հօր մահը լսեց, նիկոմիդիա էր Գիոկղետիանոսի քով» 9): Յիրաւի այն սարքերութիւնը կայ որ ըստ հատուածի «Կոստաս արքայ Հռովմայ» մեռնում է «յետ ամ. ց.», մինչդեռ ըստ Խորենացու մեռնողն է Կոստանդ՝ «յետ ոչ բազում ամաց»: և հատուածի մէջ աւելի անորոշ կերպով է ասած, թէ Կոստանդիանոս այնուհետև իւր հօր պաշտօնի մէջ է կարգուում. իսկ որ տեղից եկած լինելու մասին խօսք չկայ: 4) Հատուածի մէջ Կոստանդիանոս խաչի նըշանը գործ է դնում արդարև Մաքսիմեանի դէմ կոխ վարած ժամանակ, թէև ոչ առաջին անգամ — իսկ թէ Պ. Կարրիէրի յիշած այս և ուրիշ դէպքերի առնչութիւնը ճշգրիտ պատմութեան հետ ինչպէս է՝ այդ ստուգելու համար ինձ առ այժմ անձեռնհաս պիտի խոստովանեմ:

Այսպէս՝ ստիպուած լինելով նաև Խորենացու պատմութեան և ս. Բասիլիոսի վարքի համեմատութիւնը մի կողմ թողնել, միայն 2 նկատողութիւն անելու պիտի համարձակիմ: Արգեօք բացարձակապէս հաստատ է, որ յունարէնի «Գալիոս» բառը կամ Խորենացու «Գաղղիոսը» և կամ հատուածի «Գաղիոսը» Գաղղիա անուան փոխարէն գործածուած է. թէ՛ կարող է լինել, որ թէ յոյնը թէ հայը այդ անուան տակ մի ուրիշ տեղ մի որ և է բերդ իմացած լինին: Եթէ հատուածի ընթերցման ձևը իբրև սկզբնական նկատելու լինինք՝ այս եզրակացութիւնը կարծեմ ամենից աւելի հաւանական պէտք է թուէր: Մեկնութեան ընդհանուր օրէնքով անյայտ անունը շատ աւելի հեշտութեամբ կարելի է յայտնի անուան փոխուած նկատել՝ քան ընդհակառակն. — Ապա հաստատ է միթէ՞ որ հայերէն «ի մետաղս» խօսքը «բովերու աշխատութիւն» է նշանակում: Եթէ դանազան հայերէն գրքուածքների մէջ «ի մետաղս» ասած է այնտեղ, ուր յունարէնը միայն պարզ պոսորի մասին է խօսում այդ նշան չէ՞ միթէ ընդհակառակն որ մենք «ի մետաղս» խօսքի համար ուրիշ բացատրութիւն պէտք է փնտռենք: 10) — Գալով վերջապէս նունէ կուտի պատմութեանը բաւական է յիշել միայն, որ նա մեր հատուածի մէջ պակասում է, և ուրեմն եթէ Պ.

9) տես եր. 12.  
10) Թող ներուի ինձ աւելացնել այստեղ, որ եթէ չեմ սխալուում Պ. Կարրիէր մի փաստ էլ Խորենացու 2Գ. գլխի մէջ գործածած սիւզնոյն բառից է հանել (գոնէ բերանացի խօսակցութեան մէջ յիշում էր այս): Ինչպէս ընթերցողը կնկատէ հատուածի մէջ դորա փոխարէն «ղձև խաչին» է ասած — պարզ հայերէն օւրեմն:

Վարրիէրի աւարկութիւնները Խորենացու նկատմամբ  
ոյժ ունեն. այստեղ այդ ոյժը կորցնում են:

Սակայն իմ գրութիւնը շատ աւելի երկար եղաւ  
քան ես անելու մտադիր էի. և աւելի բաներ ստի-  
պուած եղայ անելու քան գուցէ իմ թերի ծանո-  
թութիւնների վերայ հիմնուած իրաւունք ունէի:  
Յոյս ունիմ ընթերցողը, ամենից առաջ իմ մեծար-  
գոյ ուսուցիչ Պ. Վարրիէր սխալ չի բացատրի վար-  
մունքս և ներողամիտ կգտնուի: \*

ԿԱՐԱՊԵՏ Ս. Տ. ՄԿԻՏԵԱՆ.

6/18 Ապրիլ 1894.

ՄԱՐԲՈՒՐԳ.

\* Յ. Գ. Ի գէպ. աչքի առաջ ունենալով որ հայր  
Կիւտ ք. Աղանեան իւր ձեռնարկած մեծայարգ աշ-  
խատութեան՝ Սիմէօն կաթողիկոսի պատմութեան  
համար անշուշտ ամեն կողմից ազդիւրներ է որոնում՝  
թոյլ եմ տալիս ինձ Արժ. Հօր ուշադրութիւնը  
հրաւիրել Իերլինի արքունական մատենադարանում  
գտնուած քարոզների մի ժողովածուի վերայ, որի  
հեղինակն է Սիմէօն վարդապետ Երևան  
նեցի. Այնտեղի հայերէն ձեռագրերի ցուցակը  
կազմող Պ. Քարամեան շնորհակալով «վարդապետ»  
բառին կից «Երև.» մասնիկը՝ կարդացել է միայն յա-  
ջորդ տողի վերայ անցրած «անեցի» ն և այդպէս էլ  
գրքի հեղինակ նշանակել ցուցակի մէջ՝ «Սիմէօն  
վ. Անեցի»-ն. Պ. Քարամեան նոյն գրուածքի ըն-  
թացքում երկրորդ անգամ հանդիպելով «Սի-  
մէօն վ. Երևանցի» անունի, փոխանակ դառնալու  
առաջինի հետ համեմատելու մանաւանդ որ 18-րդ  
դարի մի հեղինակ «Անեցի» լինել չէր կարող՝ այս  
«երկրորդ» ընթերցուածքը սխալ է համարել. —  
Ինչ և իցէ այս ձեռագիրը ինչպէս ինձ երևաց ար-  
տագրութիւն չէ: այլ նոյն իսկ հեղինակի գրածը,  
այնպէս որ գուցէ նա միակ օրինակ լինի. իսկ իւր  
պարունակած մանաւանդ 2 քարոզները՝ միւսոն  
օրհնութեան և ս. Էջմիածնի տօնի տոթիւ, բացի  
հստորական արժանիքից իրենց մէջ արծարծուած  
գաղափարների համար պատմական նշանակութիւն  
ունին և անշուշտ Սիմէօն կաթ. ի գործը պիտի լի-  
նին. Իժարադարար ես այն ժամանակ խիստ զբա-  
ղուած լինելով՝ այդ քարոզները օրինակիչ չկարողա-  
ցայ: բայց այդ դժուար չէ ի հարկէ անել տալ:

Այլ և մեր ձեմարանական եղբայր Քուշմանեանի  
համար, որ «Արձագանքի» միջոցով յայտնել էր, թէ  
ուստեարենի քերականութիւն է պատրաստում՝ կա-  
րող եմ հետեւեալը նկատել. Փարիզի Աղգ. մատե-  
նադարանի Suppl. Armen. 66 ձեռագիրը ներկայա-  
նում է մի «համառոտութիւն հայկական քերակա-  
նութեան Աւետաց լեզուի» արարեալ ի Վարապետ

• գպրէ Ղահրամանեան Ա. Թանգիլեանց Գաշու-  
լաղցոյ. 1848 ամի: որից այնտեղի օրինակը «եռ  
օրինակել ի Թիֆլիզ քաղաքի ի վանք անուանեալ  
եկեղեցւոջ վիճակար առաջնորդն Պրուսայու Գէ-  
որդ սրբ. և ուսումնասէր արքեպ. Կ. Պօլսեցի»  
1842 թ.: Գուցէ ուրեմն Քուշմանեանը այս տե-  
ղեկութիւնից օգտուելով կ'աշտղեցնէ գտնել ընա-  
գիրը և այդպիսով իւր գործը աւելի կ'թեթեւացնէ:  
ՆՈՅՆ.



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք \*



ախրնթաց յօղուածներիցս  
մէկում (§ 8) արդէն դէպք  
ունեցայ Խորենացու ինձ ի  
մօտոյ յայանի ձեռագրերի  
դասաւորութեան մի թեթե  
փորձ անելու: Այնտեղում  
արդէն նկատեցի, որ Ա դա-  
սը երեք որոշ ստորաբաժա-  
նում ունի մինչդեռ Բ դա-  
սը—և ոչ մի: Երկար և ման-  
րազնին ղիտողութիւնները ինձ համոզեցին,  
որ Ա դասի ստորաբաժանումները՝ խառն ի  
խուռն, անկանոն և անկերպարան շեղումներ  
չեն, այլ առանձին առանձին խմբեր են, մի-  
մեանցից շատ անջատ՝ և որոշ կերպով սահ-  
մանաւորուած: Այս իսկ հիման վրայ այդ  
ստորաբաժանումները՝ աւելի պարզութեան  
համար՝ այսուհետեւ անուանելու եմ Ա, Բ,  
Գ խումբ, իսկ Բ դասը—Գ խումբ:

Այսպիսով իմ ձեռքում եղած 17 ձեռագրե-  
րը + Սանահնի օրինակը (ձեռքի տակ ունիմ  
Մատի հրատ. բաղդատութիւնը և ոչ թէ  
բուն ձեռագիրը) + Վարինեանցի 2 օրինակ-  
ների բաղդատութիւնը = ընդ ամենը 20 օրի-  
նակ՝ կազմում են իմ դասաւորութեան, այն  
է՝ Ա, Բ, Գ, Դ չորս խմբերի հիմունքը: Խո-

\*. Տես նախընթաց համարը.